

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ >>ՊՈԱԿ-ի 2015թ-ի ապրիլ ամսին կատարված աշխատանքները

2015թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից <<Դիլիջան>> ԱՊ >>ՊՈԱԿ-ի բաժիններում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Պահպանության բաժնի կողմից ԱՊ-ի ռեժիմի բնապահպանական խնդիրների հիմնական դրույթների մասին քաղաքում և գյուղական համայնքներում ազգաբնակչության հետ կազմակերպվել են հանդիպումներ և ժողովներ: 2015թ-ի ապրիլ ամսում պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է ապօրինի հատված 5 ծառ և 7 ճյուղ, որոնց համար կազմվել է 2 անտառխախտման արձանագրություն, որոնք ուղարկվել են << Բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու: <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանի հիման վրա 13.04.2015թ-ին սկսվել է 2015թ-ի գարնանային հերթական ստուգողական ստուգում, որը կավարտվի մայիսի 13-ին: <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղի տարածքում կատարվել են 5-հա ծառատունկի, և 3 հա լրացման աշխատանքներ:

2. Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է <<Դիլիջան>> ազգային պարկի բույսերի և կենդանիների տնտեսական արժեքավոր տեսակների պոպուլացիաների, բույսերի համակեցությունների գերիշխող տեսակների բացահայտման ուսումնասիրություններ, վայրի պտղատուների հիմնական տեսակների /հաճարի, կաղնի, բոխի/ ֆենոլոգիայի ուսումնասիրություններ:

Իրականացվել են դասընթացներ, կատարվել է <<Դիլիջան>> ԱՊ-ի տարածքում անհետացման վտանգի տակ գտնվող <<Ձնծաղիկ Միրզոևայի>> բուսատեսակի ուսումնասիրություն:

3. Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատանքները կազմակերպելու համար վրանների և քնապարկերի գնման նպատակով իրականացվել է մրցույթ: Մրցույթի արդյուքում հաղթող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր:

Ավարտվել են <<Ք.Դիլիջան - Պարզ լիճ>> էկոերթուղում տեղեկատվական և կողմնորոշիչ ցուցանակների տեղադրման աշխատանքները: